

ԻԱՌԱՍԿՁՐԻ ՀՈ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ Հ-Ի ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԽՐԻԱԳՅԱՆ

«Հայերենի բարբառագիտական ատլասի (ՀԲԱ) նյութերի հավաքման ծրագրին 741-րդ հոդվածը, որտեղ ձևակերպված է այս օրինաչափությունը, իր առջև նպատակ է դնում պարզել, թե բառակցքի հո հնչյունակապակցության հ-ի դիմաց հայերենի բարբառները հնչյունական ի՞նչ համապատասխանություններ են դնում: Թեև նախապես էլ հայտնի է, որ հո-ով սկսվող մի խումբ բառեր բառակցքի հ-ի դիմաց տարբեր բարբառներում հրևան են բերում մի դեպքում խ, այլ դեպքերում՝ վ կամ ֆ, բայց ծրագրի տվյալ կետի նպատակն է պարզել, թե հայոց լեզվի գրաված ո՞ր հատվածներում են առկա այդ համապատասխանությունները, ապա նաև՝ որոշակի նախադրյալներ ստեղծել՝ քննելու ու բացատրելու հնչյունաբանական տվյալ երևույթի առաջացման պատճառները:

Հարցի ուսումնասիրությունը խիստ կարևոր է դառնում հատկապես այն պատճառով, որ բառակցքի հո-ի մասին եղած բացատրությունները հակասական են ու ճիշտ պատկերացում չեն տալիս բարբառներում նրա տարաբնույթ արտահայտությունների պատճառների մասին: Մյուս կողմից, տվյալ հնչյունական երևույթը, որպես ապագա ատլասի կարևոր զուգաբանություններից մեկը, կարիք ունի ավելի հանգամանակից ու ամբողջական մեկնաբանության:

Այժմ մի կողմ թողնելով հ-ի դիմաց մի շարք բարբառներում առկա հ ~ խ համապատասխանության քննությունը, որը ուսումնասիրության ենթակա մի այլ հարց է (որի մասին ՀԲԱ-ի ծրագրում հատուկ կետ կա), այստեղ ծանոթանանք հ-ի մյուս «փոփոխություններին»:

Նախ նշենք, որ բառակցքում հո հնչյունակապակցություն ունեցող ոչ բոլոր բառերն են, որ հ-ի դիմաց հանդես են բերում վ կամ ֆ: Դրանց թիվը խիստ սահմանափակ է: Այստեղ ունենք՝ հոգթ, հոգի, հող, հոտ, հոբ բառերը, որոնք բարբառներում համապատասխանաբար ունենում են՝ վոգթ, վոգթիկ, վէրթ, ֆոգթ, վոֆի, ֆոֆի, վէդ, ֆոդ, վէտ, ֆոտ, վէր, ֆոբ հնչյունական տարբերակները: Սրանց պետք է ավելացնել նաև ոսս բառը, որը թեև գրական լեզվում զուրկ է բառակցքի հ-ից, բայց բարբառներում հանդես է բերում նույն օրինաչափությունը՝ հոսս, վէսս, ֆոսս¹:

Արևմտյան տարածքի մի շարք բարբառներ՝ արևմտահայ գրական հայերենի հոս, հող, հոն ցուցականների հ-ի դիմաց նույնպես ունեն ֆ՝ ֆոս ֆոդ, ֆոն կամ ֆէտ, ֆէդ, ֆլն: Այս դեպքում, ինչքան էլ դա տարօրինակ լինի, բացակայում են վ-ով բարբառային ձևերը: Դա թերևս պետք է բացատրել նրանով, որ այդ ցուցականները խորթ են արևելյան տարածքի բարբառներին: Ուսկայն

¹ Հասկանալի է, որ այս բառերը վայրից վայր ունեն նաև իրենց ածանցված ձևերը (հոգել, հոտել, հոբել, ոսսայ, ոսսուդ և այլն), որոնք հանդես են բերում իրենց արմատական հիմքի հնչյունական համապատասխանությունը (հոգել, վլդել, ֆոգել):

անկախ սրանից, ճոս, ճոդ, ճոն բառերի ֆ-ով ձևերը դուրս չեն ընդհանուր օրինաչափությունից²:

Նախքան վերը նշված բառերի քննությանն անցնելը, տանք բառասկզբի նո-ի դիմաց հանդես եկող հնչյունական համապատասխանությունների տալածական բնութագրերը: Խեն այսօրվա փաստական նյութի ընձեռած հնարավորությունները դեռևս այնքան քիչ են, որ ճշգրիտ սահմանները գծել հնարավոր չէ, բայց, այնուամենայնիվ, փորձենք եղածով ներկայացնել տվյալ երեւոյթի տարածական բաշխման ընդհանուր պատկերը:

ա) Տարածական ամբողջականության առումով՝ առավել ընդգծվածությամբ սահմանազատվում է հո ~ խո համապատասխանության տարածքը: Այն տնցնում է Ողմ, Մոկս, Շատախ, Վան, Ուրմիա, Մարաղա, Թավրիզ, Սալմաստ, Խոյ, Մակու, Բայազետ, Դիադին, Մանաղկերտ սահմանագծով և այնուհետև Վանա լճի հյուսիս-արևմտյան ծովափով գնում է դեպի Արճեշ, Արծկե, Խլաթ՝ մինչև Բաղեշ: Այս տարածքի ամբողջականությունը և որոշակի ընդգծվածությունը, թերևս, պայմանավորված է հո ~ խ համապատասխանության պահպանողականությամբ՝ որպես ենթաշերտային երևույթ³:

բ) Տարածական որոշակի սահմաններ ընդգծվում են նաև ճո ~ վէ, վը համապատասխանությունների համար: Այն առկա է Ղարադաղի մի մասում, թերևս սկսած Խանազադ, Ուրգութուն գյուղերից, և այնուհետև այդ երևույթը տարածվում է դեպի հյուսիս՝ Զանգեզուր ու Ղարաբաղ, մինչև Մարդակերտ, Կոճողոտ, Հարությունագոմեր բնակավայրերը, որովհետև սրանցից հյուսիս (օր. Թալիշ), արդեն գործում է հո ~ հո համապատասխանությունը: Այս նույն տարածքում կան նաև մի քանի փոքր կղզյակներ, որոնք դուրս են այս օրինաչափությունից (Մեղրի, Ագուլիս, Ռամիս, Փառակա):

գ) Համեմատաբար հստակ չէ (այսօրվա տվյալներով) ճո ~ ֆո համապատասխանության տարածական սահմանները: Այն ընդգրկում է Արարատյան բարբառը (Նրևան, Քանաքեռ, Աշտարակ, Մուղնի, Փարսի, Օշական, էջմիածին, ինչպես նաև պատմական Վայոց ձորի տարածքի մի շարք խոսվածքներ), հասնում է մինչև Իգդիր (Հախվերիս), ապա՝ Դիլիջանով, Իջևանով դեպի Նոյեմբերյան ու Լոռի: Արևմտյան տարածքում այն երևում է Կարին, Ակն, Շապին-Գարահիսար, Սեբաստիա, Հաճըն բնակավայրերում, Սուլավա, Կուտի, Զալբըր, Նոր Նախիջևան գաղթավայրերում (վերջիններս ըստ Գ. Զահուկյանի տվյալների): Հետագա փաստական նյութն ավելի հստակ կդարձնի այս օրինաչափության տարածման սահմանները:

դ) Այս երեք տարածքներից դուրս՝ մյուս վայրերում առկա է ճո-հո կամ հո-հո, հու համապատասխանությունները (Մուշ, Խարբերդ, Երզնկա, Տիգրանակերտ, Զմշկաձագ, Սասուն, Դաշքեսան, Շամբոր, Խանլար և այլն):

Արդ, ինչպես բացատրել այս երևույթը: Ո՞րն է տարբեր վայրերում հան-

2 Մտնենագրությամբ սրանք վկայվում են միջին հայերենի չրթանից և բացի ո-ով գրությունից, ունեն նաև աւ-ով և օ-ով տարբերակներ (հաւս, հաւդ, հաւն և հօս, հօդ, հօն): Պետք է կարծել, որ այս գրությունների մեջ նախնականը (ստուգաբանականը) օ-ով ձևերն են, իսկ մյուսները՝ դրանց ուղղագրական տարբերակները, որոնք գրադարձվել են այդպես՝ կապված ու ձայնավորի երկրաբարառային կամ մենաբարբառային արժեքավորման հետ: Նախնական ո-ի օգտին են խոսում բարբառային ֆոս, ֆոդ, ֆոն ձևերը, որոնց ֆ-ն կարող է առաջանալ օ-ից, բայց ոչ երբեք աւ-ից կամ օ-ից:

3 Զ. Դ. Կուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 267:

դես եկող նույն բառերի բառասկզբի շնչունների տարբերության պատճառով հեղանում ընդունված է ասել, որ հ-ի դիմաց հանդես եկող ֆ և վ հնչյունները արդյունք են հ-ի շնչունափոխության: Նման մեկնության հանդիպում ենք, օրինակ, 2. Աճառյանի մոտ: Նա Կարնո բարբառի հնչյունական համակարգը նկարագրելիս գրել է. «Բառասկզբի հ ձայնը հաջորդական օ-ի քով կդառնա ֆ. ինչ. ֆող՝ հող. ֆոտ՝ հոտ. ֆոր՝ հոր, ֆոս՝ հոս, ֆոդ՝ հող, ֆոն՝ հոն. սական օ-ի քով այս փոփոխությունը տեղի չունենար, ինչպես կցուցնե հօր՝ հօր ձևը: Նկատելի է, որ այս ձայնափոխությունը հատուկ է գյուղացոց լեզվին. քաղաքացիք հ ձայնը անփոփոխ կպահեն և ասոր պատճառն ալ հետևյալն է, ինչպես վերը տեսանք, ֆ ձայնին ծագման պատճառով օ-ի երկրաբառային ուս արտասանությունն է, քանի որ օ-ի քով այսպիսի փոփոխություն տեղի չունենար: Արդ՝ քանի որ քաղաքացիք ղուրկ են ո ձայնեն և ղայն օ կհնչեն, բնականաբար զուրկ պիտի ըլլան նաև այս տեսակ ֆ-են»⁴:

Այս հարցի մասին Աճառյանը խոսում է նաև այլ աշխատություններում: Մասնավորապես «Հայոց լեզվի պատմության» մեջ, երբ քննում է հայ բարբառների ծագման և գրանցում առկա բարբառային հնարանությունների հարցը, անդրադառնալով հ հավելում ունեցող բառերի խնդրին, հորք բառի կապակցությամբ նկատում է. «Այսօր մեր բարբառները այս ուրք բառի կողմից բաժանվում են երկուսի. մի խումբը գիտե ուրք, մյուսը՝ հորք: Այսպես՝ Վան, Մոկս, Սալմաստ, Մարաղա, Ագուլիս ունեն ուրք, ուրքիկ ձևը, իսկ Ախալցխա, Կարին, Ալաշկերտ, Մուշ, Խարբերդ, Տփղիս, Սվեդիա, Ասլանբեկ, Համշեն, Արդվին ունեն հորք, հորքուկ, Երևան, Սուլավա, Սեբաստիա, Խրիմ ունեն ֆորք. որ առաջանում է հորք ձևից, ուրեմն նրանք էլ պատկանում են երկրորդ խմբին: Ղարաբաղ ունի վրէք, որ անորոշ է և կարող է ծագել թե ուրք և թե հորք ձևից. հմմտ. մի կողմից սույ>վրէսպ. ուն>վրէց և մյուս կողմից՝ հող>վրէդ»⁵: Թվում է, թե հենց այս հորք բառի օրինակով Աճառյանը պիտի գտներ տվյալ հնչյունական երևույթի բացատրության բանալին, բայց, ինչպես երևում է, նրան խանգարել է բարբառի բառասկզբի վրէ-ի ծագումնաբանական երկվությունը: Աճառյանի այս մեկնաբանությունը հետագայում որդեգրում են այլ լեզվաբաններ:

Նույն կարծիքը, ավելի պարզեցված ձևով, արտահայտել է Ա. Ղարիբյանը: «Հ բաղաձայնը,— դրել է նա,— վերածվում է ֆ հնչյունի ո ձայնավորից առաջ Արարատյան (Երևան), Կարնո, Հաճրնի և Սեբաստիայի բարբառներում. օրինակ՝ հող>ֆօղ, հոր>ֆօր, հողի>ֆօի (Երևան, Կարին), ֆուէղ<հող, ֆուէղ<հոտ (Հաճրն), ֆորք<հորք, ֆող<հող (Սեբաստիա)»:

Ղարաբաղի բարբառում նույն ո ձայնավորից առաջ հ բաղաձայնը վերածվում է ատամնաշրթնային վ ձայնեղ բաղաձայնի, այսինքն Երևանից տարբերվում է միայն ձայնեղացմամբ. օրինակ՝ հող>վրէղ, հօր>վրէր և այլն:

Ղարաբաղի բարբառում հո կապակցությունն արտասանվում է վր, օրինակ. հօղ>վրղ, հօտ>վրտ, հօր>վրռ⁶, Ղարիբյանի մեկնաբանություն մեջ ուշա-

4 2. Աճառյան, Հայ բարբառագիտություն. Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով). (Էմիլյան ազգագրական ժողովածու, Մոսկվա—Նոր Նախիջևան, 1911, էջ 105):

5 2. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 411:

6 Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 132:

գրավ է այն դիտողությունը, որ Ղարաբաղի բարբառում ու ձայնավորից առաջ լի-ի դիմաց հանդես եկող վ-ն նրանի բարբառից տարբերում է իր ձայնեղությանը, այսինքն՝ վ-ն դիտում է որպես ֆ-ի ձայնեղ տարբերակը, Բայց այս դիտողությունն արված է տարբերայնորեն՝ առանց համապատասխան եզրակացությունների:

Խնդրին մի փոքր այլ մոտեցում է ցուցաբերում Ռ. Բաղրամյանը: ՄՀ. Աճառյանը և Ա. Ղարբյանը, — գրում է նա, — այս ֆ-ի առաջացման միջոցներից մեկը համարում են բառասկզբի Ռ-ն, որը ճհաջորդական ու-ի քով կդառնա ֆ: Այս բացատրությունը համողիչ չէ, որովհետև կոկորդային ճ-ից շրթնային (այնտեղ է լինի՝ շրթնատամնային — Հ. Մ.) ֆ ստանալ հնարավոր չէ: Ֆ-ն ստացվել է բնական հնչյունափոխությամբ երկու ճանապարհով, երբ բառասկզբի Ռ-ն իր շունչը տալով հաջորդական ու-ից առաջացած վ-ն, վն հնչյունախմբի վ-ին, սա դարձնում է ֆ և ինքը շնչվում (այս փոփոխությունը տեղի չի ունենում ու երկբարբառ շունեցող և ճո ~ ճո փոփոխություն ունեցող բարբառներում, որովհետև աչտեղ նման ձևերում վ չկա. հմտ. ճոբ > ֆոբ, ճոգի > ֆալեզի, ճոզ > ֆոզ, սոբ > ֆոբ > ֆսոբ և ճոբ > վրե, ճոգի > ճոգի, ճոզ > ճոզ > վրեզ) և երբ > վ փոփոխությունից հետո վերջինս խլանում է (հմտ. հալա ~ սոբ > ճալա ~ հաֆսոբ, հալաֆել > ճալֆել > ճաֆել, հալա > հալաֆ (?)) և վերջապես, երբ վ և ճ բարդվում են (թավճել > բոֆել):⁷

Այստեղ Բաղրամյանը փաստորեն աշխատում է ավելի առարկայական դարձնել Աճառյանի կարծիքը ֆ-ի առաջացման վերաբերյալ, հատկապես հենվելով Աճառյանի վերը բերված այն մեկնության վրա, ըստ որի ֆ-ն առաջանում է ու-ի երկբարբառային ուտ արտասանությունից:

Մեզ հետաքրքրող հարցին այստեղ առնչվում է Բաղրամյանի դատողությունների հատկապես այն մասը, որտեղ նա փորձում է բացատրել ու-ից առաջ գտնվող ճ-ի կրած «փոփոխությունը»: Բաղրամյանի մեկնաբանմամբ ճ-ին հաջորդող ու-ի մեջ նախ կատարվել է երկհնչյունային փոփոխություն, որի հետևանքով ու-ն վերածվել է վ-ն, վ-ն (ասենք՝ ճոզը դարձել է՝ ճվոզ կամ ճվոզ), որից հետո բառասկզբի ճ խուլ հազագի ազդեցությամբ վ-ն խլացել է ու դարձել շրթնատամնային խուլ շփական ֆ (ճոզ > ճվոզ > ֆոզ), այսինքն՝ այս դեպքում էլ ֆ-ի առաջացման համար վճռական դերը տրվում է ճ-ին:

Նման բացատրությունը խիստ առարկելի է, որովհետև այս դեպքում հաշվի չի առնված, որ բարբառներում բառամիջի ու-ն չի ստանում երբեք վ-ն կամ վն երկհնչյունային արտասանություն: Նման փոփոխություն հատուկ է միայն բառասկզբի դիրքին, իսկ բառամիջում միշտ ունենք միայն ուտ, ունե երկբարբառային արտասանություն: Բաղրամյանի մեկնաբանությանը հակասում են նաև իր իսկ բերած և Ղարաբաղի ու Ղարադաղի տարածքի խոսվածքներին բերող ճոզ > վրեզ, վրդ տիպի համապատասխանությունները, որոնց մեջ բառասկզբի ճ-ն չնչվել է, բայց դրա փոխարեն ունենք ոչ թե ֆ, այլ վ⁸:

⁷ Ռ. Բաղրամյան, Հնչյունափոխություն (հայերեն բարբառներ), (Խ. Արսլանյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտ, «Խիստական աշխատություններ», 1965, № 1, էջ 161):

⁸ Բաղրամյանը նույնիսկ որք > ֆոբ անցման բացատրության համար անպայմանորեն վերցնում է ճոբ «միջանկյալ օղակը» (որք > ճոբ > ֆոբ), որպեսզի հիմնավորի ֆ-ի գոյությունը, էր ավելի տրամաբանական կլինեք ֆոբ-ը բխցնել որք > վոբ պատմական հնչյունափոխությամբ առաջացած ձևից՝ բառասկզբի վ-ի խլացմամբ:

Ժիշտ չէ Բաղրամյանի նաև այն պնդումը, թե հ>ֆ «փոփոխություն» տեղի չի ունենում այն բարբառներում, որոնք ու երկբարբառ չունեն։ Իրողությունն այն է, որ ֆ-ն կարող է լինել ո (ուօ) երկբարբառի և՛ գոյություն, և՛ շփոթության պայմաններում։ Ըստ որում, երկու դեպքում էլ հ-ի դիմաց կարող է և ֆ չլինել (հմատ, հօթ, հօտ, հօղ* առանց երկբարբառացման՝ բարբառների մի մասում, այդ թվում նաև զրական լեզվում և հուօթ, հուօտ, հուօղ՝ երկբարբառացմամբ. օրինակ՝ Մշո բարբառի մի շարք խոսվածքներում), որ նշանակում է, թե ֆ-ի գոյությունը պայմանավորված չէ հ-ով։ Ժիշտ է միայն (այն էլ՝ մասամբ), որ շրթնատամնային բաղաձայնի առաջացման մեջ էական դերը պատկանել է ո-ին. բայց ոչ երբեք բառամիջում՝ հ-ից հետո ընկած դիրքում, ինչպես այդ ներկայացվում է։

Մեր կարծիքով տվյալ երևույթն ունի ավելի պարզ ու հասարակ բացատրություն, բան մինչ այժմ նրան տրվել է։

Բառասկզբի հո-ի դիմաց հո, խ և վէ, ֆո⁹ հնչյունական համապատասխանությունները առաջացել են երկու հնագույն բարբառային նախաձևերի հիմքի վրա, որոնցից մեկում այդ բառերն ունեցել են հ-ով, մյուսում՝ առանց հ-ի բառասկզբի։ Առաջինից հետագայում զարգացել են արդի բարբառների մի մասի խ-ով, երկրորդից՝ ո-ով և ֆ-ով բառաձևերը։

Հատկապես բարբառների այն մասում, որոնց մեջ քննվող բառերի բառասկզբի հ-ի դիմաց խ է (հօգի>խօգի, հօղ>խօղ և այլն), հո~խ համապատասխանությունը գոյություն ունի ոչ միայն հիշյալ բառերում, այլև հին հայերենից ալանդված ունեցող բոլոր բառերում (հարսն>խարս, հին>խին, հաց>խաց, պանել>պախել, բահ>պախ և այլն)։ Սա նշանակում է, որ հո~խ համապատասխանությունը համակարգային երևույթ է և հո>խ անցումն էլ, որպես այդ ընդհանուր օրինաչափության դրսևորումներից մեկը, ինքնին հասկանալի է։

Այլ է վ-ի և ֆ-ի հարցը։ Հո~վէ, հո~ֆո համապատասխանությունները ոչ միայն համակարգային չեն և հանդես են գալիս միայն սահմանափակ թվով բառերում, այլև հո>վ, հո>ֆ անցումները հնչյունաբանորեն հասկանալի չեն։ Հատկանշական է այն, որ հ-ի դիմաց ֆ-ն հանդես է գալիս հենց այն նույն բառերում, որոնց մեջ այլ վայրերում վ է։ Սա հիմք է տալիս եզրակացնելու, որ քննվող բառերում վ-ն և ֆ-ն ունեն ընդհանուր ծագում և այս ելակետից պետք է դնալ դեպի դրանց բացատրությունը։

Ավելի հանգամանորեն քննենք այդ բառերը։

Եթե դիտարկելու լինենք, օրինակ, հօթ, հող, հուտ, հուր բառերի բարբառային արտահայտությունները՝ Ղարաբաղի ու Ղարադաղի տարածքի խոս-

վածքներում, որտեղ հո-ի դիմաց առկա են վէ, վրէ, վը հնչյունակապակցություններ, ապա դրանց բառասկզբի վ-ն անմիջապես հիշեցնում է ո-ով սկսվող բառերի ընդհանուր պատմական հնչյունափոխությունը, երբ հին հայերենի բառասկզբի ո-ն այս տարածքի խոսվածքներում ստացել է վէ, վրէ, վը հնչյունական արտահայտությունը։ Իսկապես, ոչխար>վէխար, աղի>վէղի, ոսկի>վէսկի, ուղի>վէրի, ուր>վէրց և նման բառերի համեմատությունը

⁹ Հօ-ի դիմաց տարբեր վայրերում հանդես են գալիս հուօ||հօ||հու, խուօ||խուել||սօ, վլ||վրել||վր, ֆուօ||ֆուել||ֆլ||ֆօ և այլ հնչյունական համապատասխանություններ։ Տեքստը շփոխարձակելու նպատակով դրանք ներկայացնում ենք հո, խ, վ, ֆ սիմվոլներով։

վերք «հորթ», վեղ «հող», վետ «հոտ», վեռ «հոր» բառերի հետ՝ հուշում է, որ վերջիններս, առաջինների նման, զարգացել են այնպիսի բառաձևերից, որոնք բառասկզբում ունեցել են ու Սա հիմք է տալիս ենթադրելու, որ բարբառային վերք, վեղ, վեռ, վետ բառերը առաջացել են ոչ թե հուր, հող, հոտ, այլ ուր, *ու, *ու, *ուտ նախաձևերից: Դա հաստատվում է մի շարք լեզվական փաստերով:

Նախ, հենց վերը նշված հորք բառը ավանդված է մեզ ուրք ձևով և դա է, որ ընկած է Ղարաբաղի ու Ղարադաղի տարածքի խոսվածքների վերք, վրերք,

վրք բառաձևերի հիմքում և պետք չէ ձգտել վերք-ը հորք-ից բխեցնել, երբ այն ուղղագծորեն գալիս է ուրք հնագույն ձևից: Այս բառի ն-ով ձևը (հորք) փաստորեն գավառական մի տարբերակ է, որ գործածվում է բարբառների գրաված մի այլ տարածքում (այդ թվում նաև արդի գրական հայերենում): Հատկանշական է, որ հայերենի այն տարբերակներում, որտեղ ն-ի դիմաց այ-սօր խ է, հորք-ի դիմաց առկա են վոքթիկ, տոքթիկ բառաձևերը (Վան, Շատախ, Մոկս, Խոյ, Ուրմիա, Սալմաստ, Մակու և այլն), որ նշանակում է, թե դրանց հիմքում էլ ընկած է եղել ուրք տարբերակը (հորք-ի դեպքում պիտի ունենայինք *խորք):

Այնուհետև, ես հնչյունակապակցության դիմաց, նրան զուգահեռ, բառասկզբի ո-ով նախատիպի օրինակ է նաև ուս բառը: Վերջինս թեև հին, միջին և նոր գրական հայերեններում օգտագործված է միայն բառասկզբի ո-ի վօ արժեքավորմամբ, սակայն այս բառը մեզ հետաքրքրող հնչյունական համապատասխանությունների ոլորտում, գրական և բարբառային վօս, վեւս ձևերի կողքին հանդես է բերում նաև բարբառային հօս և ֆօս ձևերը, որոնք միանգամայն համահունչ են հօք ~ վեք ~ ֆօք շարքի օրինաչափությանը: Սա նշանակում է, որ այստեղ էլ նախապես ունեցել ենք ն-ով (հոս) և առանց ն-ի (ոս) ձևեր:

Երրորդ օրինակը, որ հանդես է բերում բառասկզբի ն-ով և առանց ն-ի տարբերակներ և ավանդված է հին հայերենից, հոգի ~ ոգի բառն է: Այս երկուսն այժմ թեև ունեն իմաստային որոշ տարբերակվածություն և կիրառական տարբեր ոլորտներ, սակայն հին հայերենում դրանք հավասարապես օգտագործվում էին նույն իմաստով: Շատ հաճախ երկու ձևերն էլ օգտագործվում են զուգահեռաբար հենց նույն գրական հուշարձանում: Արդի բարբառներում առավել գործածականը գրական արտասանությանը մոտ ն-ով ձևն է (հօփ), թերևս որպես կրոնական ոլորտի բառ: Սակայն անկախ սրանից՝ այս բառը ևս բարբառներում հանդես է բերում նույն հօփ, խոփ, վօփ, ֆօփ օրինաչափությունը, որոնք սերում են վերը նշված հոգի և ոգի տարբերակներից:

Առանց բառասկզբի ն-ի՝ ո-ով սկսվող տարբերակ ենթադրելի է նաև հող բառի համար, որից և պիտի զարգանային Ղարաբաղի ու Ղարադաղի տարածքի խոսվածքներին հատուկ վ-ով ձևերը: Ծիշտ է, նման բառաձև առանձին վրկայված չէ մատենագրության մեջ, բայց նրա գոյությունը ենթադրվում է ոչ միայն արդի բարբառային ձևերի առկայությամբ, այլև հաստատվում է մի այլ բառի օգնությամբ: Դա այգող բառն է, Հայկազյան բառարանում այս բառը բացակայում է: Այն վկայված է Առձեռն բառարանում, որտեղ տրված է նրա հետևյալ մեկնությունը. «Մեռելին էգուց եղած պաշտոնը»: Ակնհայտ է, որ տվյալ բառը բաղադրյալ է՝ կազմված այգ և ող բաղադրիչներից: Առաջին

եզրում կարելի է կոհհել, որ այդ «առավոտ» բառն է, բանի որ այն որոշակիորեն առնչվում է բարդ բառի ընդհանուր իմաստի հետ: Բայց երկրորդ մասն անորոշ է. այն կարող է լինել և ածանց, և բառարմատ: Որպես ածանց կարող է առնչվել ենթակայական զերբայի վերջավորության հետ. սակայն, եթե այդով ենթակայական զերբայ լիներ, ապա նրա ցույց տված գործողությունը պետք է հարաբերեր այն կատարող անձանց հետ: Սակայն բառի այդ իմաստը չի համընկնում Առձեռն բառարանում բերված բացատրության հետ: Այդտեղ խոսքը ոչ թե գործողության հետ առնչվող անձանց, այլ մի երևույթի մասին է, որը կատարվում է առավոտյան մեծելի գերեզմանի վրա: Ստեղծված անորոշությունը վերանում է, երբ նկատի ենք ունենում մեր բարբառներում նույն իմաստն արտահայտող հետևյալ բառերը. Լգնահող, իգնահողէ՛ք. իննաֆող, ինգնավղ և այլն: Նախ՝ սրանք ունեն թաղման հաշորդ օրը՝ առավոտյան հանգուցյալի գերեզմանին կատարվող այց-ծիսակատարություն իմաստը, որ համընկնում է Առձեռն բառարանում այգող բառի համար բերված իմաստի հետ: Այնուհետև, բարբառային բառաձևերի համեմատական քննությունը ցույց է տալիս, որ դրանք զարգացել են հնից ավանդված այգող, այգ(ա)հողք ձևերից, ըստ յուրաքանչյուր բարբառի հնչյունափոխական կանոնների: Այդ բառերում թեև բարդության առաջին բաղադրիչը կորցրել է իր երբեմնի «առավոտ» իմաստը ներկայացնող մասի (այգ) հնչյունական կերպարանքը (չնայած առաջին երեքում դրանք ղեռն ակնառու են՝ իգնահողէ՛ք, էֆնահող. իննաֆող. հմմտ. այգի > իգի > իլի, այգուց > էֆուց բարբառային ձևերի հետ), սակայն երկրորդ մասը շատ որոշակիորեն բացահայտում է իրեն՝ ներկայացնելով հող բառի բարբառային՝ վերը նշված համապատասխանությունները (իգնա-հողէ՛ք, իննա-ֆող, ինգնա-վղ): Սա նշանակում է, որ այգող բառի երկրորդ բաղադրիչը հող բառի առանց հ-ի՝ ող տարբերակն է¹⁰, որից և զարգացել են բարբառային վղ, վրէղ, վրղ ձևերը:

Այսպիսով, քննվող վեց բառարմատներից չորսը բառասկզբի ճ-ով ձևերի (հողի, հորք, հորս, հող) կողքին ունեն նաև առանց հ-ի (ոգի, ուրք, ուս, ող) վկայություններ: Մյուս երկու բառերի (հուռ և հուր). համար բառասկզբի ու-ով գրավոր վկայություններ թեև չկան, բայց բարբառային վէտ, վէր ձևերի առկայությունը խոսում է նման նախաձևերի գոյության մասին (երբ դրանք հատկապես դիտարկում ենք վերը բերված մյուս բառերի օրինաչափ փոփոխությունների ֆոնի վրա):

Հարցի պարզաբանման տեսակետից կարևոր է նաև այս բառերի ծագմանաբանական քննությունը: Նշված վեց բառերից հինգը ստուգաբանված են և ունեն հնդեվրոպական ծագում: Ստուգաբանված չէ հուր բառը: Ըստ որում, այդ հինգից չորսը հնդեվրոպական նախաձևի բառասկզբում ունեն ք հնչյուն. այսպես՝ հող < *pōl, հողի. ոգի < *pōy, ուրք, հուրք < *porthu, ուս, հորս < *por-

¹⁰ Այս մասին տես նաև Հ. Աճառյանի Արմատական բառարանում (Հ. Ա.), որտեղ Այգ արմատի գավառական ձևերի բաժնում Աճառյանը բերում է նաև այգող բառի բարբառային տարբերակները: Այդ առթիվ նա անում է հետևյալ դիտողությունը. «այս բոլորը (նկատի ունի այգող բառի գավառական ձևերը—Հ. Մ.) գործ են ածվում «այգողք» նշանակությամբ և իրենց ձևով ցույց են տալիս, որ բառը կազմված է ոչ թե -ող մասնիկով, այլ հող բառից և հետևաբար այգողը էր հնապեւ այգահողք այգհողք, ինչպես ունի Առաք. պատմ. 417 այգահողք»:

հ'օ և միայն հոտ բառն է, որի համար վերականգնվում է *od՝ բառասկզբի օ ձայնավորով ձևը:

Հայտնի է, որ հնդեվրոպական Բ-ն հայերենում բառասկզբում տալիս է հ կամ ընկնում է: Արդ, հենց այս բառերում էլ միանգամայն կանոնիկ դրսևորվել է Բ-ի անցման օրինաչափությունը, երբ մի ղեպքում այն փոխվել է հ-ի, մյուս ղեպքում՝ ընկել: 'Խատելով այս բառերում առկա փոփոխությունից, պետք է կարծել, որ հնդեվրոպական Բ-ի անկումը կամ փ-ի փոխարկվելը եղել է ոչ թե ընդհանուր հայերենյան օրինաչափություն, այլ հայերենի երկփեղկված բարբառային օրինաչափություն: Այլ կերպ ասած, այս փոփոխությունը հանդես է եկել որպես հայերենի հնագույն բարբառային տարբերություն, երբ հնդեվրոպական հնչյունական համակարգից հայերենին անցնելու ժամանակ մի մասում Բ-ն տվել է հ, մի այլ մասում՝ ընկել:

Ինչ վերաբերում է հնդեվրոպական *od նախաձևին, ապա դրանցից հայերենի բարբառներում առաջացած վեռ-ը միանգամայն օրինաչափ է վերը բերված բառերի պատմական հնչյունափոխության ֆոնի վրա: Այստեղ առարկություն կարող է վերցնել միայն նրա հոտ տարրերսկը: Այս ղեպքում էլ, եթե հ-ն, մյուսների նման, չի դալիս մի հին Բ-ից, ապա, համենայն ղեպս, նախապատմական շրջանի գոյացություն է: Հայտնի է, որ հայերենում կան ոչ թիշ թվով բառեր, որոնք հնդեվրոպական նախաձևերի համեմատությամբ հանդես են բերում նախահավելվածային հ: Ենթադրվում է, որ այդ հ-ն կարող է լինել հնդեվրոպական կոկորդայինների արտահայտություն¹¹:

Նույնը կարելի է ենթադրել նաև հնդեվրոպական նախալեզվի *od-ի դիմաց հայերենում հանդես եկող հոտ-ի համար: Սակայն, անկախ այն բանից, թե հ-ն այստեղ հնդեվրոպական կոկորդայինի արտահայտություն է, թե հավելական մի հնչյուն, հոտ-ը, մյուս բառերի նման, նախապատմական շրջանում ունեցել է բարբառային երկու տարբերակ, մեկը փ-ով, մյուսը՝ առանց փ-ի:

Ահա բառասկզբում հ շունեցող այդ տարբերակներից են հետագայում դարգացել բարբառների վ-ով և ֆ-ով ձևերը: Սրանցից նախնականը, անշուշտ, վ-ով ձևերն են, քանի որ սրանք են, որ անմիջապես առնչվում են օ ձայնավորի պատմական հնչյունափոխության հետ¹²:

¹¹ Г. Б. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 238—243; Н. М. Симонян, Индоевропейские архаизмы армянских диалектов (Քննաժողովական դիսերտացիայի ավտորիֆերատը, Երևան, 1979, էջ 10):

¹² փ-ի վո, վո, վէ փոփոխության համար ազդակ է ծառայել նրա արտասանության մեջ առաջացած երկրաբարբառական երանգը, որի հիմքի վրա հետագայում զարգացել են ուօ, ուէ երկրաբարբառները: Փաստերը ցույց են տալիս, որ օ-ի երկրաբարբառումը տարբեր տարածքներում ու ժամանակային տարբեր կտրվածքներում ընթացել է ոչ համաչափորեն ու օ միանշանակ: Մի կողմ թողնելով դրանց մեջ արձանագրվող տարբերություն փոփոխությունների թնտյությունը, այստեղ նշենք միայն, որ ուօ, ուէ երկրաբարբառների արտասանական հիմքի վրա են զարգացել մեզ հետաքրքրող վո, վէ հնչյունական կապակցությունները: Մասնավորապես Ղաբարզի տարածքի խոսվածքներում այսօր լին օ-ի դիմաց արձանագրվող վլ-ն զարգացել է հենց այդ կարգի (ուլ) երկրաբարբառային արտասանությունից, դրա լավագույն ապացույցը կարող է լինել նաև բառամիջի դիրքի օ-ի դիմաց մի շարք բառերում է ձայնավորի առկայությունը (լինպես՝ րազաուր-լրվավէր, ձիաուր-ձիավէր, բողկ-պլիկ և այլն), որ առաջացել է ուէ երկրաբարբառի պարզեցումից (նման ուօ երկրաբարբառի փոփոխությանը, էրբ բառասկզբի ուօ վո անցման կողքին բառամիջում առկա է ուօ> օ համապատասխանությունը՝ ոլլաուր> ուօլլաուր վոլլաուր, բայց խոտ>խօտ>խօտ):

ինչ վերաբերում է այս նույն բառերի ֆ-ով ձևերին, ապա կարծում ենք, որ ֆ-ն դրանց մեջ առաջացել է ոչ թե ճոհ հնչյունակապակցության փոփոխությանմբ, այլ պարզապես բառասկզբի ո-ի հնչյունափոխությունից առաջացած վ-ից: Այլ կերպ ասած՝ ո-ից զարգացած վո, վօ. վէ կապակցությունների վ-ն է, որ ձայնեղության կորստով բարբառների մի մասում դարձել է ֆ: Ըստ որում, այդ փոփոխությունն էլ դիտում ենք ոչ որպես սյուսմական հնչյունափոխությամբ կատարված երևույթ (որովհետև այդ դեպքում ո-ից առաջացած բոլոր վո-երը պիտի փոխված լինեին ֆո-ի), այլ մի փոփոխություն, որ տեղի է ունեցել հնչույթաբանական մակարդակում, անհրաժեշտաբար, այն էլ միայն մի խումբ բառերում: Այս դեպքում, մեզ թվում է, որ այդ փոփոխության մեջ դեր է խաղացել տվյալ տարածքի բարբառներում պատմական հնչյունափոխության մի շարք երևույթների հետևանքով առաջացած բառային նույնանուններից ազատվելու ձգտումը: Այսպես՝ բառասկզբի ո-ի երկհնչյունային արտասանության, բառավերջի ֆ-ի անկման, ձայնեղ բաղաձայնների խլացման հետևանքով հին հայերենից ավանդված ողն, ոտն, ուղն բառերը ստացել էին վող, վոտ, վոբ արտասանությունը և իրենց հնչմամբ նույնացել ճող, ճոտ, (ճ)ոբք բառերի՝ առանց ճ-ի տարբերակների պատմական փոփոխությամբ առաջացած՝ *ոլ>վող, *ոտ>վոտ, ոբք>վոբք ձևերի արտասանության հետ: Սա իր հերթին առաջացրել է տարբեր նախահիմքերից եկող բառերի նույնանունների շարք, որով և խախտվել է այդ բառերի ֆունկցիոնալ հավասարակշռությունը: Այս հիմքի վրա առաջանում է նույնանունները տարբերակելու անհրաժեշտություն, որը և տվյալ դեպքում լուծվում է սրանց մի մասի բառասկզբի վ-ի փոփոխությամբ¹³, Այդ բառերի բառասկզբի վ>ֆ անցումը տեղի է ունենում ֆ հնչույթի գոյության պայմաններում, այսինքն՝ XI—XII դդ. հետո ընկած ժամանակաշրջանում: Ըստ որում այդ անցումը նախապես կարող է կատարված լինել մեկ-երկու բառում. հետագայում միայն այն կարող է տարածվել նաև այլ բառերի վրա, որոնք գտնվում են բառասկզբի նույն (հոյն>ֆոն, ոչիլ>ֆելիլ) և ~խ~վ հակադրության մեջ:

Հարաբարդի և նրան հարող վայրերի խոսվածքներում այդ պրոբլեմը չի առաջանում ոչ միայն այն պատճառով, որ նրանցում բացակայում է ֆ հրնչույթը, այլ հիմնականում այն բանի հետևանքով, որ այստեղ գործած պատմական հնչյունափոխության երևույթները հիշյալ բառերի մեջ չէին առաջացնում այնպիսի փոփոխություններ, որոնցով նրանք նույնանային մյուսներին

¹³ Բարբառներից կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, իր պատմական հնչյունափոխության կամ փոխառության հետևանքով առաջացած նույնանունությունը կանխվում է տվյալ բարբառի (կամ բարբառախմբի) հնչյունական համակարգի ներքին նախադրություններով: Նկատելի է, օրինակ, որ հատկապես այն բարբառներում, որոնց հնչյունական համակարգը հարուստ է ձայնավորներով, այդ հակասությունը լուծվում է ձայնավորների փոփոխության միջոցով: Օրինակ՝ Սյունիքի տարածքում խուլներից հետո օրինալափ է ու>օ հնչյունափոխությունը, ինչպես՝ տուն>տոն, շուն>շոն, բույ>բոբ, սուր>սուր և այլն: Այսպես պիտի լիներ նաև: լուղ բառում, Բայց քանի որ այդ բառի լուղ>բղ հնչյունափոխությամբ՝ բղ-ը համընկնում է նույնանունը լսող «փոշի» փոխառյալ բառի հետ, օրինալափ օ-ի փոխարեն ունենք քմային օ՝ բղ>լծղ: Կատարվել է երկու նույնահունք բառերի հնչյունական տարբերակում, Ընդհանրապես, այն բարբառներում, որտեղ ձայնավորական համակարգը ազդատ է, նման տարբերակիչ դեր կատարում են բաղաձայնները: Վ>ֆ անցումը մեր քննած բառերում նենց այդ երևույթի դրսևորումներից մեկն է:

հետ (որք > վերք և որդն > վերքեր, վետ «հոտ» և ոտն < վէներ միանդամայն տարբերակում էին իրենց արտասանութեամբ):

Այսպիսով, գրական հայերէնի վերը բերված բառերի բառակգրի հո-ի դիմաց արդի բարբառներում արձանագրվող հնշունական տարբեր արտահայտութիւններն արդյունք են նախապատմական շրջանի բարբառային երկու տարբեր բառակիրքների (հ-ով և առանց հ-ի) պատմական զարգացման, որը և հասցրել է տարբեր արդյունքների. այս իսկ տեսակետից էլ դրանցից որեւէ մէկը չի կարող համարվել մյուսի ծագումնաբանական հիմքը:

СООТВЕТСТВИЯ 2 В ИНИЦИАЛЬНОМ ЗВУКОСОЧЕТАНИИ 20 В АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ

ОГАНЕС МУРАДЯН

Резюме

У определенной группы слов в литературном армянском языке, начинающихся звукосочетанием **հո-** (**հոգր**, **հոգի**, **հոդ**, **հոտ**, **հոգ** и т. д.), обнаруживается соответствие: **հ~լ**, **հ~վ**, **հ~ֆ** (как то: **հոդ** ~ **լոդ** ~ **վրդ** ~ **ֆոդ**).

В специальной литературе указывается, что **վ** и **ֆ** возникли в результате слияния дифтонга **п** и **б**. Новейшие исследования показывают, что указанные слова в доисторический период развития языка выступали в двух диалектных вариантах: в одном случае с начальным **հ**, в другом — без него (**հոգր**: **ոգր**). Именно из второго варианта в дальнейшем развились формы с **վ** и **ֆ** (**ոլր** > **վորք**, **վրքր** > **ֆորք**, **ֆերք**).